ստամպոլ աղասիին, միքիտիին խոնախն, երեք սուլթաններուն սարայներն և այլք բա-
զումք։ Բայց փոքր մի ի մասնաւորն ինչեալ եկեսցուք ի Վանկայ, յորում վերստին
այրեցան ամենայն տունք բարեկամաց մերոց, և տունք զորս հովուէի ես անդ։ Արդ
աւելի քան զերբորդ մասն տունք նորոգ չինեալք յանցեալ հրդեհէն վերստին այրեցան։...
Իսկ թէ ասացի, զինչ պատճառ եղև, որ այսպէս այս հրդեհ այսչափ մէյտան դտաւ, և
ոչ փութով չինջուցին, ասի թէ յայնմ ժամու՝ յորում հրդեհն սկսաւ, ուժաւորք այսինքն
զօրպահք իբր արանց վեց հարիւրից ելին ի խասըմիաչայն, և զապիթք ի լինիլն զհետ
նոցա, և ի ջարդելն զբազումս ի նոցանէ զոր զտին, հրդեհն աճեցաւ, և եղև անմարելի։
Եւ այս հրդեհ եղև բեկումն և թշուառութիւն մեծ բնակչաց քաղաքիս մանաւանդ հայոց
ազգիս... ամենայն վիշտք եկին հասին ի վերայ քաղաքիս։ Քանզի և ի միւս կողմանէ
ժանտամահն ևս օրըստօրէ զօրացեալ զբազումս տապաստ արկանէ։...

Նուաստ ծառայ

Ցամի տեառն 1756 յուլիսի 10 Հայր Զաքարիա Վ. Ա[լէքսանեան]

[ի Կ. Պոլիս]

ՃՂԵ.

Քեահեա Արապեան արքեպիսկոպոսէն մէկ քանի տեղեկութիւններ ևս։

Տեառն տեառն բազմայանձար Աբրայ Հօրդ
հանդերձ միաբանիւք ողջոյն և սէր

Զեկուցումն լիցի ձեզ, զի յայսմ ամի և յամսեան մայիսի գրեցի առ ձեզ զիմն
քարտեզ, զպատասխան նորա ոչ ընկալայ ի ձէնջ։ Ուստի այժմ իստիպեցայ կրկին ծանու-
ցանել և իմանալ ի ձէնջ զայն վաղճանեալ Կարապետ անուն Կեսարացի Վարդապետէ,
որ յետ դարձմանն ի Վէննայու գոլ վաղճանեալ ի Թրիէստէ քաղաքին, և աստ զլուրն
նորա լուայ ոչ ի միոյ այլ ի բազմաց եկողաց, եթէ նոյն վաղջանեալ վարդապետն յետ
վաղջանման արար զբազումս սքանչել[ի]ս յայնքան որ կուռաց եդ զլոյս աչացն, վասն
այսորիկ փափագիմ իմանալ զայս ի ձէնջ։ Միւս ևս աստ Կեսարացի Վրդանէս Վարդա-
պետէն այսօր երեք օր է որ ընկալաւ զՎերջի Օծումն, յոյժ նուաճեալ յայնքան որ ձայն
նորա նուազեցաւ և այսօր բժ[ի]շ[կ]քն ասացին ի վաղն հազիւ ելանէ այլ մեռանի։ Դարձեալ
մերձ է վերջանալ հայկաբար Ինջիքլիքան ի տպարանէ։ Դարձեալ տեսի զվարս սրբոյն
Յակոբայ զոր յղեալ էք առ մօնսինեօր անթօնելլի, զի նա եցոյց ինձ գոլ գործք Հայր
Մաթէոսի վասն նորա զոհանամ զձէնջ. զի հարկ եր զարդարիլ նոյն գիրքն սրբոյս մերոյ,
ուստի մինչև ցայսօր նոյն գիրքն ոչ վերջացաւ, զի պատճառն է, նոյն մօնսինեօր անթօ-
նելլին առեալ էր յինէն զԳիրքն Սուրբ Գրիգոր Նարեկացւոյ, և ի նմանէ արտահանէ
զպատչանն, և ինքն թարգմանէ ըստ բանին նորա։ Դարձեալ ծանուցանեմ ապառնի
քարտիզիւ մօնսինեօր Շէյրիմանի ձեռամբ վասն մօրն իմոյ առ ձեզ։

Ողջ լերուք ի տէր. յանցնեմ զիս ի սրբասուն յաղօթս ձեր որպէս յառաջ։

Մնամ ըստ ամենայնի պատրաստական

Յակոբոս Մեսրոպ Քեահեայ Արապեան

1756 յօգոստոսի 7 Ընչին Վարդապետ

[ի Հռոմ]